

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԲՈՒՐՈՒՆ (ԲԸԼԲՈՒԼ) = ՎԱՐԴԵՎԱՐԴ

(Ա. Կադեմիկ Ֆ. Ս. Կորցի)

Կարո՞ղ է արդեօք լինել լեզուաբանութեամբ քիչ թէ շատ հետաքրքրուող մի անհատ, որ լսած չլինի նորագոյն Ֆիլոլոգիայի հսկայ կոթող ակադեմիկ Կորչի մասին, որի բազմաթիւ անհաւատալի քանակով այլ և այլ լեզուներ և բարբառներ տիրապետելն ստեղծել է նրա պատկերի շուրջը լուսեղէն շրջանակ, հաւասար չափով հարազատ, երկրագնդի հին թէ նոր, մեռած թէ կենդանի ազգերի համար: Այդ վտիտ, կենսուրախ ծերունին, որ իր կենդանի, առողջ խօսքով կախարդում էր լսարանի գիտութեան ծարաւով վառուած ուսանողներին և մեռած տառին շունչ տալիս իր տարօրինակ ունակ ձևակերպումներով, այդ մեծ ալեօրը, որի բազմաթիւ աշակերտները ցրուած ամենուրեք նրա գծած ուղին են լայնացնում իբրև կաբինետի գիտնական, պրոֆեսսոր կամ սոսկ ուսուցիչ և որն իր մի գիտնական աշակերտի վկայութեամբ չէ թէ լուսատու աստղ, այլ «արեգ կրնայ համարուել համեմատական լեզուաբանութեան աշխարհում», ահա այդ կորովի անյաղթ ակադեմիկ պրոֆեսսորն իր էութեան գէթ մի փոքրիկ մասով շատ քիչ է յայտնի հայ իրականութեան մէջ, այն չափով միայն, որ չափ խոշոր է մեր վտիտ, համեստ լեզուաբանական պանթէոնը: «Ձի կարելի չընտել և՛ Ֆ. Կորչի մի ուրոյն յատկութիւնը, — ասում է նրա մի աշակերտը՝ Մոսկուայի համալսարանի պատմա-լեզուաբանական մասի ղեկան պրոֆ. Գրուշկօն, — դա նրա վառ կենդանի վերաբերմունքն է բոլոր տեսակ լեզուային երևոյթներին, որը նրան բնորոշում է շատ և շատ լեզուաբաններից, որոնք ուսումնասիրում են լեզուի երևոյթներն իբր հանրահաշուական վերացական բանաձևեր: Նրան հաւասար չափով մօտ են իր ուսումն

նասիրած բոլոր լեզուները, դասական, ռոմանական, սլա-
ւոնական, մոնղոլական, իրանական—արևելեան թէ արև-
մտեան, գործածուող թէ արխիւային, հաւասարապէս
սխալուած կլինի նրա գիտցած տասնեակ լեզուներից ամեն
մէկը համարելով նրան իր հարազատ ազգային գիտնական:
Եւ նա յառած այդ բազմաթիւ իրար հետ կապ չունեցող
լեզուների վրայ, համարձակ կարողանում էր իր անծայր
շրջանում քննել այս և այն երևոյթը, կցորդել նրան
ուրիշ վայրերի հետ, համեմատել, հանել անսպասելի
տուեալներ: Բնաւ սովորական մահկանացու չէ նա լեզուա-
բանական աշխարհում. այն երևոյթը, որ մեզ թւում է շատ
պարզ և հասարակ, կօրշի գրչի տակ հոլովուելով, տարրա-
լուծուելով ստանում է բոլորովին այլ, խորիմաստ պատկեր:

Ո՞վ չէ լսել բըլբուլ բառը, որի ակնյայտնի ձայնա-
նմանութիւնը չի թողել և ոչ մի գիտնականի այլ ծագում
փնտռել նրա մէջ: «Բոլբոլ» բառը,—ասում է կօրշի մի
ուրիշ լեզուաբան աշակերտ պրօֆ. Ա. Կրիմսկի,—ես առաջ
ընդունում էի աներկբայօրէն ձայնանմանութեան արդիւնք
և՛ այն հիման վրայ, որ այդ բառը գտնւում է միաժա-
նակ երկու ոչ ցեղակից լեզուների՝ արաբերէնի և պարս-
կերէնի մէջ»¹⁾:

Բայց տեսնենք թէ ինչ է ասում այդ մասին «ըմբոստ»
լեզուաբանը Մոսկուայի Հնագիտ. Ընկ. Արևելեան բաժ-
նում կարդացած մի զեկուցման մէջ, որ ես մէջ եմ բե-
րում թարգմանաբար:

«Բոլբոլ»²⁾ (بلبل) պարսկերէն բառը շատ սերտ կապ
ունի պարսից բառագիտութեան մէջ գոլ-ի (گ)՝³⁾ հետ:
Յայտնի է քնարական «գոլ և բոլբոլ» առասպելը սոխակի՝
վարդի անբախտ սիրահար լինելու մասին՝³⁾: Արդեօք այդ
առասպելն առաջացել է լոկ նմանահնչիւնութեան հողի՞

1) «Древности восточная» т. IV 1913 г.

2) Կովկասեան լեզուներում ինչպէս և հայերէնում ար-
տասանում է բոլբոլ, բըլբուլ, գոլ-ը՝ գիւլ: Ծան. թարգմ.

3) Համեմատել Գրիգոր Աղթամարցու «Երգ վարդի և սոխակ»-ի
հետ:

վրայ: Ազգակից չեն բառակազմապէս «գոլ»ն ու «բոլբոլ»ը՝
ինչ բառագիտական ծագում ունի «բոլբոլ» բառի առաջին
մասը—«բոլ»:

Պարսից բառերում սկզբի «բ» հնչիւնը կարող է կա-
պուել հին իրանական «բ»-ի հետ. օր. քէանդ (دب—կապ,
կշկուռ, հանգոյց) ծագում է քանդա-ից: Քայց հնարաւոր է
և ք առաջացնել վ-ից, օր. պարսկ. քադ (دب—քամի) վա-
տա-ից: Սակայն եթէ հին վ-ին հետևում էր վանկային ր,
նա նոր պարսկերէնում առհասարակ փոխւում էր գ-ի,
ինչպէս երևում է հէնց օրինակ վրկա-ից (գայլ, ոռւսերէն
ВОЛК), որին համապատասխանում է նոր պարսկ. գ'որդ
(گور): Լ հնչիւնը (բոլ' ում) կարող է ծագել հնդերոպական
ր-ից և Լ-ից, ինչպէս և ըդ համախմբումից, համեմատել
վարդա-ից պարսից գոլ'-ը (گول), ուր Լ=ըդ-ին. ևս պարս.
դիլ (دب—սիրտ)=սանսկրիտ հրդ, Աւեստի zpd, հայերէն
սիրտ (ուր ա-առաջացել է դ-ից): Հետևաբար «բոլբոլ»
բառի առաջին մասը (բոլ') կրնար անարգել կապուել
«վարդ»-ի հետ, եթէ չլինէր վերոյիշեալ բացառութիւնը,
որով «վարդ» բառի վ-ն փոխարկուել է գ-ի գոլ' (گول) բա-
ռում: Քանի որ այդ երևոյթը կատարահի մեզ քիչ յետոյ
էլ, ուստի կզբաղուենք գրանով մեզ հետաքրքրող բառի
հետագայ քննութեան ատեն:

Ինչ վերաբերում է բառի երկրորդ մասին (նոյնպէս
ըով), նախ քան նրա քննութիւնը պիտի յիշել, որ
պարսկ. նոր գրական լեզւում, որի հիմքն է մէկ շարքառ
և ոչ թէ մի քանի, պատահում են սակայն ուրիշ ար-
տասանութեան տարրեր, թէև այդ տարրերն իրենց
հնչիւնային կազմուածքով հակասում են նոր պարսկա-
կան լեզուի սովորական ոգուն: Մենք գիտենք, օր. արի-
ական ալ-ի նոր պարսկականում ք-ի փոխուելը, ինչպէս որ
արիական աալ (ջուր)-ին նոր պարսկերէնում համապա-
տասխանում է աք (آ): Միևս կողմից, սակայն տեսնում
ենք զանազան վայրերում ջրի անուն ոչ թէ աք, այլ ավ
(համեմատ. ոռւսական гуляющая вода آب). գրական լեզ-
ւում իսկ տեսնում ենք նոյն երևոյթը, ինչպէս օր.

Սաադին գործ է ածու՛մ ղէրմաւէ (كروماو-տաք ջուր) փոխանակ ղէրմաւէ (كروماو): Նոյնպէս և գրական լեզու՛մ տեսնու՛մ ենք վ-ի ներկայութիւն շարվաղար (շարփաղարից = քրէհտար), ուր վ ստացուել է փ-ից. ինչպէս և արիական իւշատրապ-ին համապատասխանու՛մ է նոր պարսկական գրական շէահրվա (شهروا): Մի այլ պատկեր բարբառային հնչնային առանձնայատկութեանց՝ նոր պարսկերէնի սովորական ձևի մէջ մտնելու գոզեշտէն (گذشتن-անցնել) բայի գ-ն է փոխանակ դ-ի: Օրէնքով տ պէտի փոխուել դ-ի և ոչ թէ գ-ի (՛, որ այժմ = յ-ն է. համեմատել արաբական خدمت-ի = ծառայութիւն, ۷۷۷۷۷ պարսկերէնում خدمت-խզմէթ փոխուելը): Այլ օրինակ. մորեխը (кузнечник) զենդերէնում կոչու՛մ է մազախա. մենք սպասու՛մ ենք նոր պարսկերէնում գ-ի տեղ յ (۷), մինչդեռ այդ բառում տեսնու՛մ ենք Լ հնչիւնը — մէալէախ (համալ. հայերէն մարախ-ի հետ). այս երևոյթն աւելի շուտ պիտի առաջանար աֆղաներէնում, ուր դ-ի Լ փոխուելը սովորական երևոյթ է (համալ. աֆղանական ۷۷۷-ձեռք = պարսկերէնում դէաստ دست):

Ի նկատի ունենալով ահա բարբառային հնչնային առանձնայատկութեանց նոր պարսկ. գրական լեզուն անցնելու նման օրինակներ, փորձենք տալ ընդ ընդ բառի առաջին, նրա հետ և երկրորդ մասի մեկնութիւնը:

Կարելի է մտածել, որ ք հնչիւնը ընդ-ում ծագու՛մ է հին իրանական վ-ից: Ճիշդ է, վերը յիշուած սովորական օրէնքով, հին իրանական վ կարճ ձայնաւորի առաջ նոր պարսկերէնում փոխու՛մ է գ-ի, մանաւանդ երկար հնչուող բաղաձայնների մօտ. շատ յաճախ ու-ից առաջ վ-ն գ-ի է փոխու՛մ, աւելի ճիշդը — հին պարսկական վի և վար(վր) ձևակերպու՛մ է նոր պարսկերէնում Գու-ի, սակաւ վա-ն Գա-ի: Պատահու՛մ է, սակայն, որ սպասուող գ-ի փոխարէն տեսնու՛մ ենք ք: Այսպէս. հնդեւրոպական վերտ (vert) արմատը՝ արիականում վարտ (vart)՝ արտացոլու՛մ

1) Հայերէն դասակ.

է պարսկերէնում ոչ միայն սովորական գէարդիդէն, գէաշտէն¹⁾ ձևով, այլ և—ըգարդիդէն. յայտնի է օրինակ հրամայական եղանակը²⁾ ըգարդ=հեռացիր, կորիր: Բրինձն (բոց) իրանական ձևակերպմամբ եղել է հաւանականօրէն վրիզի կամ վրինզի (հմմտ. սանսկրիտ. վրիհի. սակայն փոխանակ սպասւող գորինջ-ի (որ գործ է ածւում միայն բարբառում), նոր պարսկերէնում մենք տեսնում ենք ըիրինջ (հայերէն՝ բրինձ—էսգ.): Վի (vi) մասնիկը նոր պարսկերէնում շարունակ համաձայն օրէնքի փոխւում է գու-ի, հմմտ. օր. գոյական Վիմանա-ից պարսկերէն Գուման (կասկած), կամ թէ գոստարդէն (گسترده) բայը, ուր արմատն է ստար (գտնւում է յունական σπορηνου, լատ. Asterno, «լաւոն. ԵԵԼԱԴԵ) = փռել, սակայն, ըրստէար (ستر) բայում [=անկողին) մենք տեսնում ենք սկզբում չէ թէ գ, այլ ը. վի փոխուել է ոչ թէ գի-ի, այլ ըի-ի: Այլ օրինակ. ենթադրեալ հին պարսկական վիստահա (հմմտ. հայերէն վստահ), միջին պարսկական (փեհլեւիկ) վիստախ (համարձակ, վստահ), արտացոլւում է նոր պարսկերէնում ոչ միայն գոստախ (گستاخ), այլ և բիստախ, ինչպէս ցոյց են տալիս բառգրքերը: Սրան համապատասխան է ալթայ-թուրքական փաշտակ-ը (անհանգիստ), որն, ի հարկէ, փոխ է առնուած իրանականից՝—փ=ը-ի, առաջացած վ-ից (վիստախ—վիշտակ—փաշտակ): Իրանական այն բարբառը, որին առանձնապէս յատուկ է հին վ-ի ը փոխուելը, է քրդերէնը: Օր. վայրի խոզը (աւեստական վարազա) քրդերէն կոչւում է ըգարազ (նոր պարսկերէն՝ գորազ—گراز): Վտարշտան-ից³⁾ (=անցկացնել, պարսկերէն

1) Գէաշտէն (گشتن) անկանոն բայ է, բունը գէաշտ, իսկ արմատը՝ գէարդ (گرد), որից և, համաձայն ընդհանուր կանոնի, կազմւում է կանոնաւոր գէարտին—հեռանալ բայը: էսգ.
 2) Պարսկերէնում, ինչպէս և տաճկերէնում հրամայական եղանակը կազմւում է արմատից, աւելի ճիշտ արմատն ինքն է հրամայական եղանակ: էսգ.
 3) Հայերէն վարազ, վ-ն մնում է անփոփոխ. նոյնը և վտար (այստեղից վտարանդի—թափառող, աստանդական): էսգ.

գոգաշտէն (کرشتن) առաջացել է քրդական ըուհարթին՝ ըուհուրթին (= ժամանակ անցուցանել)։ Ահա թէ ինչու պարսկական բոլբոլ-ի երկրորդ ը կարելի է կապակցել բարբառային վ-ին։

Մնում է միայն պարզել վերջին լ տառը։ Ի նկատի ունենալով փուլ — ڤ (= կամուրջ) բառը, որ հաւասար է աւեստական փերետու-ին, փեհլեիկ փուհր (փուլ)-ին՝ նոյնպէս և փէահլու ڤهلو (կող) = աւեստ. պերետու, փէհլե-իկ փահրուկ, փայլուկ, կարելի է ենթադրել, որ վերջնային լ-ն ընդ՝բոլ բառում ծագում է ըտ-ից։

Այսպէս ուրեմն, հնարաւոր է մտածել, որ բոլբոլ-ը ծագել է փաստացի մեզ անյայտ, բայց լիապէս հաւանական «վարդա-վարտա»-ից այսինքն վարդերի մէջ՝ պտտուող։ Այս բառի հաւանական գոյութիւնը կարելի է ենթադրել աչքի առաջ ունենալով Աւեստ. գուժօվարետա (որը պարսկերէնում պիտի լինէր գոհգէարդ — دگرگ = վարժութիւնների մէջ շրջուող, պտտուող)։ Ճիշտ է, «վարդա-վարտա»-ից սովորական նոր պարսկերէնում պիտի լինէր գուլգէարդ — دگرگ²), բայց չէ՞ որ ենթադրւում է, որ «բոլբոլ»-ը է բարբառային արտայայտութիւն։

Ո՛ւր կարող էր ծնունդ առնել սոխակի նման անուն. ամենից առաջ այնպիսի անտառներից զուրկ վայրերում, ուր գտնւում են միայն արհեստական ծաղկանոցներ՝ միակ ապաստարան սոխակի համար։ Այդպիսի տեղեր Պարսկաստանում քիչ չեն, և մի՞թէ դոցա մէջ չէ և Քրդստանը՝ որի բարբառից ամենից հեշտ կարելի է հանել «վարդավարտ»-ի «բոլբոլ» փոխուելու հաւանականութիւնը։

Գանձակ

Էսգէր

3) Գուլ (վարդ) գէարդ (գէարդիդէն کردیدن) կանոնաւոր բայից — պտտուել, շրջուել, այստեղից է գէարդէան کردن ենթակայական դերբայը, որ մեր գաւառաբարբառներում էլ պարսկերէնի նման գործ է ածւում «պարանոց» մտքով, համեմատել «գէարդանդ կոտրուի» անէծքը։

Էսգ.